ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻԴԵԱԼԸ ՆԱՀԱՊԵՏ ՌՈՒՍԻՆՅԱՆԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ

Նահապետ Ռուսինյանը XIX դարի արևմտահայ լուսավորական շարժման ամենանշանավոր ներկայացուցիչներից է՝ հասարակական-քաղաքական գործիչ, մտածող, փիլիսոփա, Արևմտահայության Սահմանադրության հիմնական ջատագովներից ու հեղինակներից մեկը/1/:

Ազգային կյանքի կազմակերպման, դրա առաջադիմության ապահովման Ռուսինյանի հիմնական տեսական սկզբունքը լուսավորական հումանիզմն ու ժողովրդավարությունն են, որոնք ուղղակիորեն համընկնում են հասարակական կյանքի բուրժուական ու սահմանադրական վերափոխումների գաղափարախոսության հետ և իրենց ընդհանուր փիլիսոփայական հիմնավորումներում հենվում են մարդու և հայ ազգի ազատ ու անկաշկանդ զարգացման, բնական իրավունքի, պարտքի ու իրավունքի փոխհարաբերության սկզբունքների վրա: Սրանով է պայմանավորված այն մեծ կարևորությունը, որ Ռուսինյանը հատկացնում էր արևմտահայության ազգային և հասարակական կյանքի սահմանադրական կազմակերպմանը, հայ իրականության մեջ սահմանադրականության ձևավորման պահանջին՝ հանդես գալով որպես լուսավորական փիլիսոփայության ու գաղափարախոսության ջատագով, դրանց սկզբունքների իրագործող, ազգային գերխնդիրներով առաջնորդվող մտավորական:

Արևմտահայության Սահմանադրությունը, թեև իր ունեցած սահմանափակ հնարավորություններին, Ռուսինյանը առաջին հերթին գնահատում էր որպես հասարակական, ազգային կյանքի կազմակերպման նոր, քաղաքակիրթ սկզբունք, հասարակական-քաղաքական իդեալների իրականացման միջոց: Սահմանադրությունը, իր տեսական ամբողջության ու գործնական նշանակության առումներով, ըմբռնվում էր նաև որպես ազգային կյանքի կազմավորման քաղաքակիրթ ու ժողովրդավարական հնարավորություն, որը անառարկելիորեն հավաստելու էր ազգային կյանքում ձևավորվող գործընթացների առաջադիմական բնույթը: Այս մոտեցմամբ նշվում է. «Ազգին արդի վիճակը՝ ըստ մեզ մէկ բառով՝ *ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ* է. եւ անոր Վարչութիւնը *ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ*....

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.... մէկ բառով ԲԱՆԱՒԻՈՐՈՒԻՒՆ ըսել է. բանաւորութիւն կառավարօղաց համար, բանաւորութիւն կառավարէլոց համար, բանաւորութիւն ազգային ամէն անհատներու համար:

Ըսել է՝ Սահմանադրութեան եկած օրէն ընկաւ.... անգիտութեւսն դարը.... եւ այն տգիտութեանց, այն անկարգութեանց, մարդկային բանաւորութիւնը ապստամբէցնօղ այն ամեն զեղծմանց եւ այն ճշմարիտ անիշխանութեան օրէրը՝ Սահմանադրութեան ծագած օրէն՝ այն միգամած տիւերը գիշեր էղան եւ Ազգն ըսթափեալ արթընցաւ անդրէն նոր առաւօտի մը մէջ, բանաւորութեան առաւօտի»/2, էջ 81-83/: Այստեղ ակնհայտորեն երևում է Ռուսինյանի լուսավորական, լավատեսական ու ռոմանտիկական վերաբերմունքը Սահմանադրության ու սահմանադրականության ուժի նկատմամբ: Բայց սրա փիլիսոփայական, հասարակական-քաղաքական հիմնավորումը բխում է մտածողի այն ըմբռնումից, որ հասարակական կյանքի իրավական կարգավորումը, նրա ներդաշնակության իրականացումը պայմանավորված է աստվածային և բնական իրավունքների հիմնական սկզբունքների գործադրմամբ և միայն այդ չափանիշով կարելի է հիմնավորել նաև քաղաքացիական հասարակության կազմավորման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունն ընդհանրապես: Այսպիսի մոտեցմամբ ստացվում է, որ իրավունքն իր ուղղակի դրսևորումներն է ստանում հասարակության մեջ՝ որոշելով հասարակական կյանքի, մարդկային փոխհարաբերությունների, մարդու նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման իրավական, օրենսդրական կարգավորման բնույթը, ինչը իր ուղղակի արտահայտությունն է ստանում պետահրավական համակարգում գործող իրավական/ դրական/ օրենքների մեջ, մարդկանց իրավահարաբերությունների կարգավորման բնագավառներում: «Մարդուս նիւթական ու բարոյական պիտոյքնէրէն իր բնական և անկորնչէլի իրաւունքնէրը կը ծնին, որոնք ժամանակէ, տեղէ և պարագայէ անկախ բնական օրինօք հաստատված էն անփոփոխելապէս եւ որոնք ոչ մէկ կերպով եւ ոչ մէկ պատճառով չ էն կրնար իրմէ յափշտակվիլ:

Այս բնական իրաւունքնէրէն զատ՝ մարդ ուրիշ իրաւունքնէր ալ ունի, ընկերական իրաւունքնէր, որոնք ընկերութեան մէջ կը ծնին և ընկերութեան մէջ կրնան կորնչիլ: Ընկերական իրաւանց կորուստը իրեն հետ կ՝ ածէ նաեւ ընկերական մահ.... Ընկերական իրաւունքնէրն ու ասոնցմէ ծագած փոխադարձ պարտիքնէրը ընկերութեան անդամոց իրարու հետ ունեցած յարաբերու-

թեանցմէ յառաջ կու գան, որոնք դրական կամ քաղաքական օրինօք կը հաստատվին եւ ըստ պարագայից կրնան փոփոխվիլ արդարութեան սկզբանց յաւէտ կամ նուազ համաձայն»/2, էջ 24- 25/:

Բնական իրավունքի սկզբունքին համահավասար, Ռուսինյանը հասարակական կյանքի կազմակերպման համար կարևորում է նաև բարոյական գործոնի նշանակությունը: Այս իմաստով իրար են փոխկապակցվում ու լրացնում իրավունքն ու պարտքը: Պարտքը, որպես բարոյական գիտակցությամբ օժտված մարդու գործունեության իրականացման պարտադիր պայման, ըստ Ռուսինյանի, սերտորեն փոխկապված է նաև իրավունքի գաղափարի հետ և, ընդհանրապես, դրանք լրացնում են միմյանց համապատասխան ներդաշնակություն հաստատելով մարդու ինքնադրսևորման ու նրա գործունեության տարբեր ոլորտներում: Եթե յուրաքանչյուր մարդ օժտված է իր անկասելի իրավունքներով և ձգտում է հասնել դրանց իրականացմանը, որպես ազատ գործունեության սուբյեկտ, ապա պարտքն ու բարոյագիտակցությունն են, որ կարող են ներդաշնակել այդ ազատությամբ ծնվող հնարավոր բախումներն ու հակադրությունները, ընդհանուրի չափանիշով կանոնավորել նրանց գործունեության շրջանակները: «Բարոյական օրէնը կը միջամտէ իրաւունքի գաղափարին մէջ իբր անոր կանոնաւորիչը երբ անիկայ կ'սկսի գործել յարտաքս: Բայց բարոյական օրէնը իւրաքանչիւր մարդոց իրաւունքը ուրիշ մարդոց իրաւունքին հետ յարաբերութեան մէջ եղած ատեն կանոնաւորելէ աւելի բան մ'ալ կ'ընէ: Ձմեզ կստիպէ ճանչնալ զայն մեր գիտակցութեան մէջ, անկէ կը գայ *պարտոց* գաղափարը, որ *իրաւանց* գաղափարին առնչական և անկէ անբաժանելի է»/ 3, էջ 165/: Սակայն, ըստ Ռուսինյանի, պարտքն ու իրավունքը փոխպայմանավորում են միմյանց, ուստի իրավունքի գաղափարն էլ անհրաժեշտաբար ծնում է պարտքի գաղափարը: Հետևաբար, չկա պարտք առանց իրավունքի և հակառակը: Իրավունքի և պարտքի այս ներդաշնակությունը Ռուսինյանի պատկերացմամբ օրենքների օրենքն է՝ արդարությունը, հասարակական կյանքի, մարդկային հարաբերությունների կազմավորման ու բնականոն զարգացման անհրաժեշտ պայմանը: Այսպիսի ըմբռնումը տեսական կարևոր նախադրյալն էր, որի չափանիշով նա ցանկանում էր տեսել նաև ազգային կյանքի գերխնդիրների լուծման հնարավորությունը: Իրավունք-պարտք փոխհարաբերության ու իրավաբարոյական գիտակցության ձևավորումը Ռուսինյանը համարում է բնական իրավունքով պարտադրվող ու հասա-

ռակայնորեն իմաստավորվող ազատության ձևավորման հիմք. հնարավոր հավասարության ու արդարության հասնելու, մարդկայինի կազմավորման նախապայման:

Հասարակական հարաբերությունների իրավական, բարոյական կարգավորման Ռուսինյանի հիմնավորումները տրամաբանված էին, տեսականորեն հիմնավորված ու դրանցում նա տեսնում էր նաև ազգային կյանքի առաջադիմության ապահովման որոշ հնարավորություններ, որոնք նա ուղղակիորեն կապում էր Սահմանադրության ու նրա սկզբունքների իրականացման հետ: Նրա հասարակական ըմբռնումների քաղաքական իդեալը սահմանադրականության սկզբունքն էր, որի շուրջ համախմբվում ու իմաստավորվում էին նաև պարտքի ու իրավունքի փոխհարաբերությունը, ընտրությունների, Սահմանադրության պահանջների իրականացումը, աշխատանքի, ազատության, կրթության ու դաստիարակության հետ առնչվող ամենատարբեր հարցերը, որոնք չափազանց հրատապ ու անհրաժեշտ էին արևմտահայության կյանքի կազմակերպման, նրա բնականոն ընթացքը իրականացնելու համար:

Իր առաջադրած այս նպատակների հիմնավորումը և ազգային գերխնդիրների իրականացումը նա կապում էր Սահմանադրության ու դրա պահանջների գործադրման հետ ազգային կյանքի ամենատարբեր ոլորտներում: Դրանցում նա տեսնում էր արևմտահայության հասարակական, տնտեսական, բարոյական կյանքը բանականության ու առաջադիմության ոգով կարգավորելու, ազգային կյանքի տարբեր բնագավառում երեսփոխական ընտրական համակարգի ու ժողովրդավարության սկզբունքների ամրապնդման երաշխիքները, քանզի «ազգային Սահմանադրութիւնն է, որ ազգային անհատներու իրարու հետ ունեցած ազգային յարաբերութեանց մէջ իւրաքանչիւրին իրաւունքն ու պարտքը կը կանոնաւորէ մէկ կողմէն, եւ միւս կողմէն զԱզգն ու զազգային Վարչութիւնը փոխադարձ պարտեօք կը կապէ իրարու հետ»/2, էջ 25/: Իրավունքի ու պարտքի փոխհարաբերությանը Ռուսինյանը տալիս է ելակետային կարևորություն: Այս չափանիշով է նա իր «Ազգային հանգանակութիւն» աշխատության մեջ հիմնավորում արևմտահայության շրջանում դրամական հանգանակություն/ դրամահավաք/ իրականացնելու և այդ միջոցներով ազգային կյանքին անհրաժեշտ նյութական, կազմակերպական, բարոյական, մշակութային, կրթական և այլ կարգի պահանջմունքները բավարարելու ու դրանց հետ առնչվող համապատասխան խնդիրների լուծումը: Նշված նպատա-

կը նա հիմնավորում է այսպես հասարակության/ ազգային կյանքի/ կենսագործունեությունը ու նրա գոյությունը ապահովելու համար, հասարակայնորեն պետք է լուծվեն նրան բնորոշ ընդհանուր պահանջները, որովհետև «ինչպես անհատներն ունին անհատական պիտոյք և իւրաքանչիւր ընտանիք իրենը, նմանապես ընկերութիւններն ալ իւրաքանչիւրը իբրեւ մի անձ կամ մի ընտանիք իր պիտոյքն ունի որ բոլոր անդամոց պիտոյքներուն մէկ տեղ գալովը կը ծեւանայ եւ կ ըլլայ ասոր համար *ընդհանրական պիտոյք*.... Ընկերութեան բոլոր անդամները իրաւունք ու պարտաւորութիւն ունին այս հոգին մասնակցելու, վասն զի պիտոյքն ամենուն է»/ 2, էջ 26/:

Ինչպես տեսնում ենք, տարբեր փաստարկներով, բայց Ռուսինյանը հիմնավորում է հասարակական-ազգային կյանքի կազմակերպման իր հիմնական ծրագիրը, որի իրականացումը հատկապես կապում է որոշակի իրավաբարոյական ու սահմանադրական սկզբունքների որդեգրման ու դրանց գործադրման հետ: Թուրքիայի տիրապետության պայմաններում դա աննշան, բայց այդ ժամանակ միակ իրատեսական ու հնարավոր միջոցն էր ազգային կառույցի պահպանման ու նրա գոյության համար անհրաժեշտ գործընթացների ապահովման, ազգային կյանքին վերաբերվող հարցերի լուծումը ինքնուրույնաբար իրականացնելու համար: Եվ դրանում նա տեսնում էր նաև ժողովրդավարական որոշակի սկզբունքների իրականացում Սահմանադրության շրջանակներում ու դրա ամրապնդման համար: Այս տեսակետից արժեքավոր է նաև նրա «Համարատութիւն առ ընտրողս» գրքույկը, որում հիմնավորվում է ազգային ժողովի ու յուրաքանչյուր երեսփոխանի կատարած աշխատանքի հաշվետվության անհրաժեշտությունը իր ընտրողներին: Այստեղ առաջադրվում է երեսփոխանի ու ընտրողների փոխադարձ պարտքի ու իրավունքի հարցը, ընտրությունները, քվեարկությունը համարվում են իրավունքի ու ժողովրդավարության արտահայտություններ, պարտքի ձևավորման կարևոր պայման, ազգային գիտակցության հասունացման արտահայտություն:

Սահմանադրության, պարտքի ու իրավունքի, ազգային ժողովի ու երեսփոխանների կատարած աշխատանքների մասին Ռուսինյանի տեսակետները, արտահայտած գաղափարները չափազանց արդիական են նաև անցումային շրջանի մեր պետության ու հասարակական հարաբերությունների կազմավորման համար: Նախ, բացահայտվում է այս հարցերի քննարկումների, դրանց տեսական հիմնավորումների ավանդույթը հայ իրականության մեջ:

Այնուհետև, ակնհայտ է, որ մեզանում ևս արդիական են մնում Սահմանադրության հիմնական սկզբունքներով հասարակական կյանքը կազմակերպելու, իրավունքի ու պարտքի գիտակցությամբ առաջնորդվելու, ազգային ժողովի ու պատգամավորների գործունեությունը ազգային շահի տեսանկյունից իրականացնելու և բազմաթիվ այլ հարցեր:

Պատմական անառարկելի պահանջ է, որ ազգային կյանքի քաղաքական, բարոյական ու հոգեբանական կազմավորման փիլիսոփայական հայեցակարգային հիմնական մոտեցումը պետք է լինի այն, որ ազգային կյանքը իրենից ներկայացնում է համակարգային մի կուռ ամբողջություն և նրա յուրաքանչյուր բաղադրիչ միմյանց հետ պետք է փոխհարաբերեն ու իրենց գործառույթային նշանակությունները իրականացնեն իրավունքի ու օրենքների, Սահմանադրության ու սահմանադրականության շրջանակներում: Սակայն, անկասկած է նաև, որ իրավունքը, օրենքը երբեք չեն ունենա ներազդող քաղաքական, տնտեսական նշանակություն, եթե դրանք զուգակշիռ չեն նաև բարոյական գիտակցության ու պարտքի հետ և չեն նպատակամղվում ընդհանուր խնդիրների լուծմանը: Ազգային պարտքի առանձնացումն ու դրա նշանակության գիտակցումը եղել են ու կմնան ազգային գերխնդիրների լուծման անհրաժեշտ միջոցներից ազգայինով առաջնորդվող ցանկացած անհատի ու խմբերի համար և հասարակական ոչ մի վերափոխում իր նպատակին չի հասնի, եթե հասարակության մեջ տիրապետող չեն դառնում իրավունքն ու պարտքը, դրանց տրամաբանված ու հավասարակշռված փոխհարաբերությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ռուսինյանի կյանքի, գործունեության ու տեսական ըմբռնումների մասին մանրամասն տես Ա. Արփիարյան, Պատմութիւ ԺԹ դարու Թուրքիոյ հայոց գրականութեան;Սարուխան, Հայկական խնդիրը և սահմանադրութիւնը; Ս. Չերազ, Կենսագրական միսիոներ, Պարիս , 1929; Գր. Օտյան ,Նահապետ Ռուսինեան, //Ն. Ռուսինեան , Դասգիրք փիլիսոփայութեան, Կ. Պոլիս , 1879, էջ ; Ա. Թևոսյան, Նահապետ Ռուսինյանի աշխարհայացքը, Երևան, 1970;
2.Ն. Ռուսինյան , Ազգային հանգանակութիւն, Կ. Պոլիս , 1865:
3.Ն. Ռուսինյան , Դասգիրք փիլիսոփայութեան, Կ. Պոլիս, 1879: